



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

514

57

Հ. 4.4.4. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 6

Պողկեարենք բայօն յերկրենեփ, միացել.

Ն. ՌԻՉՈՎ

ԱՐՄԱՆԱՊՑՈՒՌՆԵՐԻ ՄԱԿԱՀԹՅՈՒՆ
ԱՆԱՍԻՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Թուրքմանեց Ե. ԽՈԼԱԹՅԱՆ

Կազմված և խմբագրությամբ
Խ. ՇԵՐԵՖՅԱՆ

Տ Ե Ր Ե Վ Ա Ն

1924

ԼՈՒՅԾ ԵՆ ՏԵՍԵԼ Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՅԱՄԲ Հ. Կ.
Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՍԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ ՀԵ-
ՏԵՎՅՅԱԼ ԳՐՔՈՒԹԿՆԵՐԸ

1. Ա. Պոպով—Հայկաբի քյափանուկ հիմանդրությունը
Գինը 10 կող.
2. Ա. Մելիք-Շահնազարյան—Դաշտային մկները և նրանց զեմ
կազինո միջոցները—Գինը 15 կող.
3. Խ. Տեր-Ավագյան—Մեղքի փառախոս հիմանդրությունը և նրա
զեմ կովկեռու միջոցները—Գինը 20 կող.
4. Ա. Յուրմալիան—Կաթնառու կովկերի կերակրելն ու խնամքը
5. Ա. Գյուլխով—Եւսէ և կանաչ պարարտացումը և բաշ ռազար
տալիս նա—Գինը 25 կող.
6. ԱՅ. Ափով—Արմատազուովների մշակությունը անառան-
հերի համար—Գինը 15 կող.
7. Ա. Յուրմալիան—Հարթերի խնամքն ու կերակրելը,
Գինը 15 կող.
8. Ա. Թումանյան—Բամբակի մշակությունը.—Գինը 35 կող.

Տարգրվում են յեկ օսւանք լույս կտեսնեն

1. Գրո. Գուրին—Ծանրուծ կովի խնամիկը
2. Սլոմոնյան—Բնառնի կենդանիների հիմանդրությունները
3. Գ. Գրիգորյան—Վաղի հիմանդրությունները
4. Խ. Յերիցյան—Կաթնառնահոսական զբույցներ
5. Խ. Տեր-Ավագյան—Մեղքի խնամտարությունը
6. Ա. Թումանյան—Ճարքացանի առավելությունները
Գիմը՝ Յերեվան Հ. Ա. Կ. Ա. Ա. ի Հրատարակության
Թրիվան, Издательство Ц. Р. Р. А.

6742
249

13339

Հ. 4. 4. 4. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 6

635.12

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք

Ն. ՌԻԺՈՎ

ԱՐՄԱՆԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՄԱԿԱՀԹՑՈՒՆ
ԱՆԱՍՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ




Թարգմանեց՝ Ե. Ա. Ա. Թ. Յ. Ա. Խ.

Խազմված է խմբագրությամբ
Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍԻ Ա. Ա. Ա. Զ. Ե. Տ. Պ. Ա. Ր. Ա. Խ.

1924





249-49-2

M 2859

об

ԹՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԿԵՐԸ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մեր լիոնային շրջանների գյուղացիության մեծ
մասը պիտի արդեն հասկացած լինի վոր այնքան ել
ձեռնատու չի զբաղվել հացահատիկների մշակությամբ:
Մեր լիոնային ցուրտ և ուժասպառ յեղած հողերի մեջ
շատ քիչ մարելանող կճարվի, վոր հարմար լինի հա-
ցահատիկների մշակության համար: Յեկ յեթե գյու-
ղացին ճարում ել ե հացահատիկի մշակության համար
մի կտոր հող, այդ գեռ բավական չե. նա պետք ե հաշվի
առնի և անբարեհաջող կլիման, քանի վոր այդ տեղերում
սուր որեր բիչ են լինում, գարունը ուշ ե բացվում, ցրտահա-
րությունները հաճախ են լինում, և այլ աննպաստ պայման-
ներ: Այդ աննպաստ պայմանները շատ վատ են ազդում
հացահատիկների բերքի վրա և հետևանքն այն և լինում,
վոր սուացված բերքը չի ծածկում հացահատիկի մշակու-
թյան վրա թափված ծախսը:

Դուրս ե զալիս, վոր չարժե չարչարվել, մեջը ծռել
և փող ծախսել այդ անողուտ գործի համար: Սակայն
այդ ճիշտ չե: Յերե մեզ մօս բարձր լեռնային մասերում
ձեռնատու չե զբաղվել հացահատիկների մշակությամբ,
ապա հաջողությամբ յեկ մեծ ոգուսով կարելի յե զբաղ-
վել զյուղանետնության ուրիշ նյուղերով:

Ինչպես վոր մեր յերերի տաք յեկ միջին մասերը
ասենահամար վայերեն են հացահատիկների յեկ ուրիշ
բույերի համար, այնպես ել մեր լեռնային ըշաները
ուս հարմար են անասնապահության յեկ կարնասնե-
ռության համար:

Սակայն հարց ե ծագում. բնչից ե, վոր հակառակ

այս նպասաավոր պայմաններին, մեր անասնապահությունը չի զարգանում։ Միշտ լսում ենք գանգատներ, թե տավարը մանր է, լղար է, կաթ քիչ է տալիս հայն։

Այս տիսուր յերեույթի պատճառը պարզ է։ Տավարատերերը միաձայն գանգատվում են, վոր կերերը քիչ են և թանգ ենու «կովերը չեն տալիս այնքան կաթ, ինչքան ուտում են», ասում են նրանք։ Յեվ իսկապես, այսպիսի պայմաններում, յերբ մի գեսխատին տեղից ստացվում է միջին թփով 50—60 փութ խոտ, պարզ է, վոր տավարը կուշտ չի մնի։ Շատ հաճախ գյուղացիները իրենց կողմանակի աշխատանքներից ստացած ամբողջ ոգուտը ծախսում են տավարի կերի վրա։ Շատ քիչ տավարտեր կա, վոր խոտ չգնի։

Յեթէ մենք ուզում ենք մեր անասնապահությունն ու կաթնատնինսությունը դարձնել ոգտավետ լեվ այդպիսով բարձրացնել ժողովրդի բարեկեցությունը, պես եաւաջին ներթին մտածենք մեր խոնհարթներն ու առոտաեղերը լավացնելու մասին։ Այս միջոցով մենք կսանենք առաջ լեվ եժան կեր։

Սա պետք է լինի ճիմնական խնդիրը այն տավարատիրոջ, վորը լուրջ կերպով վորոշել է կուլտուրական միջոցներով զարգացնել գյուղական անասնությունը։ Շատ և եժան կեր կարելի յեւ ստանակ յերեր միջոցներով՝

1) Գաւային խոտաբուծությամբ զբաղվելով.—Յերեքնուկ (սիրի-սիրի), առվույտ (յոնջա), կորնգան, վիկ և այլն մննդաբար խոտեր ցանելով։ Պատերազմից առաջ մեզանում շատերն եյին սկսել զբաղվել խոտաբուծությամբ, բայց այժմ քչերն են զբաղվում զբանով։

2) Վայրի սարգազեթիները լավացնելով լեվ ճահիճները մօակելով՝ այսինքն դարձնելով խոտաբքի և արոտի հարմար տեղեր։ Այդ ուղղությամբ պետք է կատարվեն շատ յեռանդուն աշխատանքներ։ Պետք է ասել, վոր մեր անասնապահության և կաթնատնության ապա-

պան կախված եւ խռոհարքների և արոտների լավացնեցուց:

3. Արմատապտուղների մօակությամբ զբաղվելով՝ այսինք շաղգամ, ճակնդեղ, գագար, գոնգեղ և այլ արմը-տիքներ ցանելով։ Արմատապտուղների մշակությունը մատչելի յէ ամեն մի գյուղացու համար, վորովհետև նա չի պահանջում մեծ գումար, այլ միայն աշխատանք և ուշադիր խնամք։

Ի՞ՆՉ ՈԳՈՒՏ Ե ՏԱԼԻՍ ՄԵԶ ԱՐՄԱՏԱՊՏՈՒԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արմատապտուղները տնտեսության համար չափազանց պլարեսք են։ Ներկայումս արտասահմանում, ֆինլանդիա-յում և Մերձբալթյան յերկրներում, վորտեղ գյուղատրն-տեսությունը ավելի բարձր է կանգնած, քան մեզ մոտ, չեք պատահի մի ամենափոքր տնտեսություն, վոր ճա-կնդեղի կամ մի այլ արմատապտուղի ցանքս անելիս զինի։

Արմատապտուղներից հետեւյալ ոգուաներն ենք ըստա-նուն։

I) ԱՐՄԱՏԱՊՏՈՒԴՆԵՐԸ ՇԱՏ ԼԱՎ ԿԵՐ ԵՆ ԿԱԹՆԱՑՈՒ
ՏԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՆՐԱ
ԿԱԹՆԱՑՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տավարը ախորժակով եւ ուտում և հեշտությամբ մարտում, յեթե կերը մի քանի տեսակից է կաղմած և վոչ թե միայն խոտից ու դարմանից։ Յեկ ընդհանրապես ավելի հեշտությամբ եւ մարտում հյութալից կերը, քան չոր կերը։ Ահա թե ինչու տավարը արածելու կամ կանաչ խոտ ուտելու ժամանակաշրջանում չտղանում եւ և կաթը շատացնում։

Մեկ մոտ ձմբանը տավարին կերակրում են միայն չոր կերով (խոտ, գարման)։ Խոտն ու գարմանը ուտելուց հետո տավարը ագանաբար ջուր եւ խմում և ուղցնում ու ձմբարենում իր ստումքսը, ուստի և կերածը լավ

չի մարսում: Հետևանքն այն է լինում, վոր կովը լղարում է և կաթը պակասեցնում: Հետևաբար ոգուտի փոխարեն աիբոջը վնաս է տալիս:

Փորձերը ցոյց են տվել, վոր յեթէ ձմբանը տավարին: Հոր կերի հետ տանք նաև հյութալից կեր, այն ժամ անակը կը ստանանք ավելի շատ կաթ:

Արմատապտութները լավ ճյութալից կեր են և յեթէ տավարին չոր կերի հետ տանք նաև հյայեվ արմատապտուդ, կաթը կավելանա:

Փորձել են ձմբանը տավարին չոր կերի հետ տալ նաև որմատապտուդ և աեսել են, վոր կաթը որական ավելանում է 8—12 փունտ, վորը կանի տամական մոտ 8 փութ:

II ԱՐՄԱՏԱՊՏՈՒԴՆԵՐԸ ՄԵԾ ԲԵՐՔ ԵՆ ՏԱԼԻՍ ՅԵՎ ԻԲՐԵԿ
ԱՆԱՍՆԻՆ ՉՈՐ ԿԵՐ ՏԻՏԵՍՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՇԱՏ ԵԺԱՆ ԵՆ.

ՆԱՏՈՒՐ

Ամենից շատ բերք տվազ արմատապտուդներն են, շաղգառն ու գոնգեղը: Սրանց ամենաբարձր բերքը մի գեսյատինից համում է մինչև 6000 փութ արմատապտուդի և 1200 փութ աերեների: Գաղարը լավ պայմանակրում մի գեսյատինից տալիս է մինչև 3000 փ. իսկ ձակնողեղը՝ 4000 փ.:

Միջին բվով կարելի յե հաշվել, վոր:

Շաղգամն	ու	գոնգեղը	տալիս	են	1 դես.	3000 փ.
---------	----	---------	-------	----	--------	---------

Գաղարը	»			1 դես.	1800 փ.
--------	---	--	--	--------	---------

Ճակնողեղը (տակը)	»			1 դես.	2000 փ.
------------------	---	--	--	--------	---------

Հիմա տեսնենք, թե ինչ է նստում գյուղացու վրա 1 գեսյատին արմատապտուդի մշակությունը աշխատանքի մինչպատերազմյան արժեքներով:

Յենթաղլենք, թե ցանում ենք դարնանը—

Վարը	10 ռ.
Տափանելը	5 ռ.
Ցանքսը	3 ռ.
Նորացնելը	20 ռ.
Քաղհանելը	15 ռ.
Հողը գափկացնելը հողուբազով	12 ռ.
Բերքը հափաքելը	12 ռ.
<hr/>	
Ընդամենը	77 ռ.

Արմատապտուղների միջին բերքի վրա բաժանելով
այս գումարը (77 ռ.) կը ստանանք՝ վոր

1 փութ շաղգամը նստում է 2,5 կոտ.	
1 փ. գազարը	4,2 »
1 փ. ճագնդեղը	3,9 »

III. Յեթե կերպվածներ ՄԵԶ ՄՏՆՈՂ զՈՐ կերծ ՄԻ ՄԱՍՀ
ՓՈԽԱՐԻՆԵՆՔ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐՈՎ, ԿԵՐՊՎԱԺԻՆԸ ԲԱՎԱ-
ԿԱՆԻ ԿԵԺԱՆԱՆԱ ՅԵՎ ԹԱՆԳ ԽՈՏՔ ԿԸ ԽՆԱՅՎՀԻ

Գիտնականները իրար հետ են համեմատել խոտի և
արմատապտուղների մնագատավությունը և զաել են, վոր
3 ֆ. արմատապտուղը իր մեջ պարունակած սննդով հա-
վասար է 1 ֆ. յերեքնուկին։ Այդ նշանակում է, վոր
առավարատերը կարող է թանգ նստող խոտի մի մասը
փոխարինել ավելի եժան կերով. միայն թե եժան կերից
պետք է վերցնի այնքան, վոր իր սննդով համապատաս-
խանի պակասեցրած թանգ կերին։ Յենթադրենք, թե
տափարատերը իր կովին տալիս է որական 1 ֆ. խոտ.
յեթե նա ունի արմատապտուղ, կարող է վերցնել 15 ֆ.
խոտի փոխարեն 1 ֆ. շաղգամ։ Այդ գեպքում դուրս կը
կա, վոր նա իր վրա որական 20 կոտ. նստող կերաբա-
ժինը եժանացը և դարձրեց 15 կոտ. (15 ֆ. խոտը
արժե 7,5 կոտ. իսկ 1 ֆ. շաղգամը 2,5 կոտ)։ Այսպի-
սով նա որական 5 կոտ. խնայողություն արեց, վորն
ամսական կանի 1 ռ. 50 կ. իսկ ամրող ձմեռվարնթաց-

քում 10 ո. 50 կ: Այդ մի կովի համար: Կերաբաժնի չոր կերի մի մասը արմատապտուղներով փոխարինելու գեղքում վոչ միայն վորոշ խնայողություն ե լինում, այլև բարձրանում է կովի տված կաթի քանակը: Յեվ յեթե տավարատերը խնայված խոտը ծախի, կամ թե հենց միայն ազատվի ձմեռվա կեսին սովորականից ավելի թանգ գնով խոտ գնելուց, դա արգեն բավական ե մեզ համոզելու համար, վորքան ձեռնոտու յե տավարին կերակրել նաև արմատապտուղներով:

Պետք ե նաև ի նկատի ունենալ, վոր մանր տավարատերերը կարիք չունին մի ամբողջ գեսիատին արմատապտուղ ցանելու: Յեթե շաղգամը 1 գեսիատինից տալիս ե 3000 փութ, այդ դեպքում բավական ե ցանել 150 լ. ս. կամ $\frac{1}{16}$ գեսիատին տեղ, վորպեսզի նրանցից ստացված բերքը բավականացնի մի տավարին ամբողջ ձմեռվա ընթացքում իբրև հյութալից, համեղ, ոգտակար և եժան կեր:

IV. ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ ԱՐՏՀ ԱԶԱՏՎՈՒՄ Ե ՄՈԼԱԽՈՑԵՐԻՑ (ՎԱՅՐԻ ԽՈՏԵՐԻՑ)

Արմատապտուղների մշակության ժամանակ մեր դլիսավոր հոգսը պիտի լինի կավել նրանց ցանքսի վրա աճած մոլախոտերի դեմ: Դրա համար հարկավոր ե ոկրում արտը բաղհանել, իսկ այնուհետեւ արմատապտուղների ծիլերը մեծանալով հենց իրենք կը խեղդեն մոլախոտերի նոր յերևացող ծիլերը:

Յեթե հողը նախապես մշակում ենք խնամքով և քաղհանում ենք ժամանակին, արմատապտուղի հավաքելուց հետո նա բավականի մաքրված ե լինում մոլախոտերից:

ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԵՅՈՒ- ԹՅՈՒՆԸ

Բոլոր արժատապտուղները պատկանում են յերկա-
մյա բույսերին. այդ նշանակում է, վոր նրանք ծաղիկ
ու սերմ են տալիս ցանելուց հետո յերկրորդ տարին:

Նրանք ցանելուց հետո առաջին տարին հաղից հավա-
քում են սննդարար նյութեր և ամբարում իրենց արմատ-
ների մեջ, իսկ հետեւյալ տարին տալիս են ծաղիկ ու
սերմ:

Հենց եղ նյութերը, վոր արժատապտուղները առա-
ջին տարին ամբարում են իրենց արմատների մեջ, ծա-
ռայում են վորպես սննդարար կեր մեր տափարի համար
ամբողջ ձմեռվա ընթանցքում:

Արմատապտուղների մշակությամբ զբաղվող գյու-
ղացին պետք է աշխատի իր ցանքուը դնել այնպիսի բարե-
հաջող պայմանների մեջ, վոր արժատները լցվեն վոր-
քան կարելի յե շատ սննդարար նյութերով, լինեն խոշոր
և հյութալից, առատ բերք տան և ձմեռը լավ դիմանան
ու չփշանան:

Վերոհիշյալ հետեւանքներին հասնելու համար գյու-
ղացին արժատապտուղների մշակության ժամանակ պիտի
հիշի հետեւյալ 5 կանոնները՝

I. ՀՈՂԸ ՊԵՏՔ Ե ՓԽՐՈՒՆԱՑՆԵԼ ՎՈՐՔԱՆ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԽՈՐ
ՈՒ ԽՆԱՄՄԲՈՂՎ:

Ինչքան հողը խոր վարենք՝ ինչքան նրան լավ փրխ-
րունացնենք, այնքան բույսի արմատները հեշտությամբ
կը խորանան ու կը տարածվեն հողի մեջ։ Պինդ, քիչ
փափկացրած հողերի վրա արմատապտուղները չեն մե-
ծանում, արմատների ձեր ուղիղ չի լինում, զանազան
կողմերի վրա ճյուղեր են տալիս, համը փշանում ե, փայ-
տացածի նման են լինում, հյութալից չեն լինում, ձմբա-
նը չեն դիմանում, չուտ են փշանում-հոտում։

Հողի մօակումը.—վորքան հողը ծանը ե, այնքան ավելի խնամքով պետք ե մշակել նրան։ Արմատապտուդ ցանվելիք հողի ճիշտ ձեփ մշակումը հետեւյան ե։—Աշնանը, հացահատիկի հունձից հետո, հողը վարում են Յվերշոկ խորությամբ միջիանի գութանով։ Գարնանը կրոկին այդ հողը վարում են, յեթե հնարավոր ե յերկծիանի գութանով փորքան կարելի ե խոր, միայն թե տուանց յենթահողը շուռ տալու, իսկ հողի կոշտերը մանրացնում են դիսքավոր ցաքանով, իսկ յեթե դրանից չկա, յերկաթե ցաքանով։ Յեթե տնտեսության մեջ կա զսպանակավոր ցաքան, լավ կլինի դիսքավոր ցաքանից հետո նրանով ել ցաքանել։ (Այդ գործիքները ստանալու համար լավ կանեք, յեթե դիմէք պետական վարձակետերին):

Յեթե այս կամ այն պատճառով գարնանը հնարավոր չպիտի լինի հողը կրկին վարել, յերկրորդ խոր վարը կատարում են ուշ աշնանը, իսկ գարնանը հողը միայն փիրունացնում են դիսքավոր կամ զսպանակավոր կամ թե չես սովորական ցաքանով (փոցխով։) Այս ձևով, այսինքն տուանց գարնանավարի, կարելի յե մշակել միայն մանը ու միշտ հակ հողերը։ Կավա-ավագախառն յեվ մաեր նողերը պիտի ե անպատճառ կրկին վարել։ Լավ կը լինի գութանից հետո գործի գնել ակոս խորացնող գործիքը, վորը լծում են գութանի հետեւ շուռ տալու։ Վորովհետեւ գյուղական տնտեսությունները այդ գործիքից չունեն, վոր ոզտվեն, այդ պատճառով ել նրանց արմատապտուդների բերքը շատ առատ չի լինում։ Ծառ դեպքերում մեր չութը կարող ե փոխարինել վարը խորացնող գործիքին։

Հողը դիսքավոր կամ զսպանակավոր ցաքանով՝ մշակելուց հետո ելի ցաքանում են թեթե ցաքաններով և աղա հարթում՝ հավասարեցնում տափանով։

~~Սրանով վերջանում է այն հողամասի մշակությունը, կորի վրա պետք է ցանվի արմատապառողը:~~

II. ՀՅԴԸ ՊԵՏՔ Ե ՊԱՐԱՐՏԱՅՆԵԼ

Մեր հողերը միշտ ել աղքատ են մննդաբար նյութերով։ Այդ պատճառով աշխանը կատարված ամենաչնչին պարարտացումն անդամ լավ է ազգում գարնանացանքի բերքի վրա։

Յեթե պարարտացնում ենք արմատապառող ցանվելիք հողամասը պետք է հիշենք, վոր չի կարելի քարմ զամադրով պարարտացրած հողի վրա արմատապտուղները տալիս են տուատ տերեների ի հաշիվ արմատների, իսկ արմատները լինում են ջրալի, շուտ են վարակվում գանազան սնկային հիվանդություններով։ Նկատել ե նաև, վոր այդպիսի հողի վրա աճած արմատապտուղները տալիս են մի քամի ձյուղեր և արմատը կիսով չափ դառնում ե ցողուն։ Բացի այդ, թարմ գոմազրով պարարտացրած հողի վրա բուսած արմատապտուղները վոչ միայն ձմեռը պահելիս հեշտությամբ հոսում-փչանում են, այլ և ըսկը-սում են հոտել հենց դաշտում։ այդ և պատճառը, վոր շատ արմատների միջուկը հենց սկզբից դասարկ է լինում, փուչ և լինում նշանակում է, վոր աշեանը դաշի վրա քարմ գամադր լցնելուց հետ պետք է երան հողի հետ վարել, վորպեսզի ձմեռվա ընթացքում հայտայվի յեզ գարնանը իրենի սնունդ ծառայի բույսերի համար։

Արմատապտուղ ցանվելիք հողամասը բացի գոմազրից լավ կը լինի պարարտացնել նաև վառարանի մոխիրով (ամեն մի դեստինին 80 փութ հաշվելով)։

III. ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՑԱՆԵԼ ՇԱՐՔՈՒԴ

Վորպեսզի արմատապտուղներն իրար չնեղեն և հեշտ մնի նրանց քաղանելն ու նոսրացնելը, անհրաժեշտ

Ե ցանել շարքերով: Արմատապտուղները ցանում են հարթ (գուղ) տեղ կամ հատուկ պատրաստած թմբերի վրա (հաճախ թմբերի վրա ցանում են ճակնդեղն ու զազարը): Այդ թմբերը պատրաստում են այնպես, ինչպես կարտոֆիլի թմբերն են պատրաստում: Գութանով կամ հատուկ մարկոսով անց են կենում նախապես լավ ցաքանած արտի միջով և պատրաստում են թմբեր: Շաղկամ, գոնզեղ և ճակնդեղ ցանելու համար պատրաստված թմբերը իրարից հեռու պետք է լինեն 10—12 վերշոկ: Խակ զաղարինը՝ 8 վերշոկ:

Ցանիսը.—Արմատապտուղները ցանում են զանազան ձեերով: Աժենականոնավոր ցանքը կատարվում է շարքացան մեքենայով: Այս սերմնացան մեքենան կարելի յե հարմարեցնել զանազան սերմերի և զանազան ցանքսերի համար: Ցեթե սերմնացան դործիք չկա, կարելի յե ցանել ուղղակի ձեռքով: Միայն դրա համար նախապես պետք է խոր ակսոներ ($1\frac{1}{2}$ վերշոկ) շինել սրածայր փայտով:

Հարկավոր չե խոր թաղել սերմերը. խակ սերմերը ծածկել կարելի յե կամ ձեռքով կամ փոցխի ծայրով: Վերևում հիշված սերմնացան մեքենան ինքն է ծածկում սերմերը:


Չեռքով ավելի հավասար ցանելու համար սերմերի հետ կարելի յե խառնել չոր մանր ավագ:

IV. ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՆՈՍՐԱՑՆԵԼ

Վորպեսզի արմատապտուղների բույսերը իրար չնեղեն կողքերից, ինչպես ասացինք, նրանց ցանում են շարքերով անընդհատ ժապավենի նման: Խակ վորպեսզի շարքերի մեջ չխանգարեն իրար աճելուն, պետք է նրանց նոսրացնել: Աժառվա ընթացքում նոսրացնում են 2 անգամ, առաջին անգամ սեհրակացնում են, յերբ ծիլերն արդեն ունեն $1\frac{1}{2}$ -2 վերշոկ բարձրություն: շարքի մեջ

թողնում են 3-4 բույսից կազմված փնջեր։ Փնջերը դասավորված են լինում շարքով մեկը մյուսից 4-10 վերշուկ հեռու, նայած թե ինչ բույս ե։ Փնջերի արանքներում գտնվող բոլոր բույսերը արմատահան են անում։

Առաջին անգամ նոսրացնելուց յերկու շաբաթ հետո նոսրացնում են յերկրորդ անգամ։ Այս անգամ ամեն փնջից ջոկում-թողնում են ամենաառողջ և ուժեղ բույսը, իսկ մյուսները քաղնանում են։ Այնպես վոր զըրքանից հետո ամեն մի բույս աճում է մյուսից հեռու, և կարող ե ազատ լայնանալ կողքերից (տես նկ. № 1)



1

2

3

Նկ. 1. Ցույց ե տալիս նոսրացնելու կարգը.

1. Ցանխը զեռ նոսրացրած չե.

2. Ցանխը առաջին անգամ նոսրացնելուց հետո.

3. Ցանխը 3-րդ անգամ նոսրացնելուց հետո.

Արմատապտուղների մշակության ժամանակ նոսրացումը ամենակարենվոր աշխատանին ե. յեթե շարքերը չնոսրացնենք այն ժամանակ բույսերն իրաւ նեղելով կաճեն դեպի ներքեվ, ուստի յեվ նրանց արմատները չեն լցվի, կլինեն բարակ ու յերկար, անհամ, նյուղավորված եկ բերքը կսացվի ժիչ։

Հաճախ ե նկատված, վոր չսեհրակացրած գազարի բույսերը իրար նեղելով արմատներով փաթաթվում են իրար. ստացվում ե 3-4 յերկար ու բարակ բույսերից կադմված մի խիտ կծիկ, վորն անպետք ե իբրև կեր։

V. ԱՐՄԱՏԱՊՏՈՒԿՆԵՐԻ ԲՈՒԿԸ ՊԵՏՔ Ե ԼՅՆԵԼ, ԻՍԿ ՄԻԶ-
ՇԱՐՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵԼ ՓԽՐՈՒՆԱՑՆԵԼ.

Արմատապտուղներով բռնված արտը պետք է մաքուր
պահել մոլախոտերից: Առանձնապես պետք է աշխատել,
վոր արտը մոլախոտերից ազատ լինի ոկզբնական շըջա-
նում, յեր գես արմատապտուղների ծլիերը չեն ուժե-
ղացել, յերբ մոլախոտերը նրանց կարող են խեղդել հեշտու-
թյամբ: Քաղհանում են 2 անգամ, սեհրակացնելու հետ միա-
ժամանակ. նոսրացնելիս ավելորդ ծլիերի հետ կարելի
յե համել և մոլախոտերը, այնպիս վոր վրա վրա առան-
ձին ժամանակ չի կորչում: Առանձին ժամանակ և կորչում
միայն միջշարքային տարածությունը քաղհանելու վրա:
Յեթե յերկրորդ անգամ նոսրացնելուց հետո արտը ելի
յե ծածկվում մոլախոտերով, պետք է քաղհանել յերրորդ
անգամ: Դրա համար դործ և ոծվում հատուկ քաղհա-
նող գործիքը «Պլանիտ» թե ձեռքի և թե ձիով
աշխատող: Գործ են ածում նայել կուլտիվատոր
հոգուրագները . որանք հարմար են միջշարքային տարա-
ծությունը քաղհանելու համար, ուրագներն ունեն շատ
պարզ կազմություն և ամեն մի զյուղական դարբին հեշ-
տությամբ կարող ե շինել:

Յանքի խնամելը.—Քաղհանելն ու նոսրացնելը
ոկզբում շատ են վախեցնում զյուղացուն, վարովնետե
շատ ժամանակ են խլում նրանից: Բայց յեթե անտեսու-
թյան մեջ մշտապես մշակվում են այդ բույսերը, այն ժա-
մանակ կարել յե այդ աշխատավնքներին վարժեցնել յերե-
խաներին, նրանք հեշտությամբ են սովորում այդ աշխա-
տանքին և կատարում են կանոնավոր, այս միջոցնվ խնայ-
վում ե գյուղացու ժամանակը և եժան և նստում ար-
ժամատապտուղի մշակությունը:

Բերենք մի քանի արինակներ ապացուցելու համար,
թե ինչքան անհրաժեշտ ու կարենոր և ժամանակին և կա-
նոնավոր քաղհանելն ու նոսրացնելը:

Չքաղճանած և վատ նոսրացրած գազարը (յերբ մի բույսը միուսից հեռու ե 2-3 վերշնկ) տալիս է 1 դեպամենտինից 600-800 փ. բերք: Իսկ քաղճանած և 2 անգամ նոսրացրած գազարը (յեթե չի ցանված հազնած հողերի վրա), տալիս է 1 դեսյատինից 1000-1800 փ, բերք: Լավ խնամելու և հողը աղբով պարարտացնելու դեպքում կը ստանանք 1 դեսյատինից 2800 փ. բերք:

Չքաղճանած և չնոսրացրած շաղգամը տալիս է 800-1600 փ. բերք, իսկ քաղճանած և 2 անգամ ցրտծ նոսրացրած շաղգամը՝ մի քիչ պարարտացրած հողի վրա, տալիս է 1900-2400 փ. բերք: Իսկ խնամքով մշակելուց և լավ պարարտացնելուց հետո տալիս է 1 դեսյատինից 4800-5000 և նույնիսկ 6000 փուժ բերք: Շաղգամի մի պլուխը կշռում է 18-24 ֆունտ:

Վա՞՞ր բույսերից նետն եվ ի՞նչպիսի հողամասում պետք է ցանել արմատավՏուղները:

Արմատապտղուղները դաշտային բույսեր են, այդ պատճառով և նրաց ցանում են դաշտերում մյուս միտմայա բույսերին հավասար: Արմատապտղուղները ցանում են զարնանը: Լավ բերք ե ստացվում, յերբ արմատապտղները ցանում ենք կարտոֆիլից հետո, վարովինեան կարտոֆիլի մշակության ժամանակ հողն արդեն փափկացած և մոլախոտերից ազատված ե լինում:

Անհարմար ե ցանել արմատապտղուղ յերեքնուելից և առվույտից հետո, վորովինեան դրանց հողերը պինդ են լինում և հեշտությամբ չեն փափէկում:

Յերբ ուղում ենք առաջին անգամ փորձի համար մի փոքր աեղ ցանել արմատապտղուղ, լավ կը լինի տան մատիկ հողամասում ցանենք, վորպեսզի հեշտ լինի ցանքին հետեւել ու խնամել և բերքը պաշտպոնել հարկանչերից ու անցորդներից:

Յեթե ընտրած հողամասը խիստ ծածկված է մո-

լախոտերով և ճմբակուղած ե, այդ դեպքում մոլախոտերից և ճիմերից ազատվելու համար առաջին առքին խամը շուր տալուց հետո լավ եցանել զիկը վարսակի հետ, ապա գոմաղբով պարարտացնելուց հետո ցանել կարտոֆիլ, իսկ սրանից հետո՝ արմատապտուղ:

ԱՌԱՆՁԻՆ ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՇԱՂԳԱՄ (Տյրհեու) .—Շաղգամն իր սննդարարությամբ ցած և կանգնած գազարից ու ճակնդեղից, բայց գրա փոխարեն համարյա առաջին տեղն ե բանում բերքի առատությամբ: Հայտնի յեն շատ գեպքեր, վոր նույնիսկ զյուղական անտեսություններում մի գեսեատինից ստացվել ե մինչև 5000 գր. շաղգամ. բազուկը ամենալավ խնամելու գեպքում քիչ ե պատահում, վոր տա 3000-3500 գութ. իսկ ինչ վերաբերում ե գազարին, բերքը ամենալավ հոգում և ուժեղ պարարտացումից հետո ել գեսեատինից 2800 գիթից ավելի չի լինում: Սրա պատճառն այն է, վոր շաղգամը քիչ պահանջներ ունի հողի վերաբերմամբ, առնում ե արագ և համենելու համար պահանջում ե քիչ ժամանակ:

Շաղգամի հողն ու նրա պարարտացումը.—Շաղգամն ամենից քիչ պահանջկուտ ե թե հողի և թե կլիմայի վերաբերմամբ: Նա կարող է անել թե ավազային թե կավային հաղերում: Ցուրտ կլիմայից չի վախում:

Շաղգամը բոլորովին չի սիրում պինդ, սառը յեփքը բռու հող, այսինքն այնպիսի հող, վոր վատ ե փափկացրած յել շատ խոնավ: Շաղգամի համար ամենահարմարը շատ փտահող պարունակող թեթև կավավազախառն հողն է: Շաղգամի հողը պետք է խնամքով փխրունացնել: Կարելի յե այնքան ել խորր չփարել, որովհետեւ շաղգամը մյուս արմատապտուղների չափ չի խորանում հողի մեջ: Նա ավելի կողքերի վար յե տարածվում:


Շաղգամը պարարտացնելու վերաբերմամբ ել այնքան պահանջկոտ չե: Անկասկած, ուժեղ և լավ պարարտացրած հողերում նա կտա ավելի շատ բերք. սակայն փորձերը ցույց են տվել, վոր համեմատաբար աղքատ հողերում ել նա տալիս է 1200-1500 գրամ մեկ դեսիմատինից: Լավ պարարտացուցիչ նյութեր են համարվում գոմաղբը, վորը պետք է փոփած լինի հողի վրա մի տարի առաջ կամ աշնանը, և լավ փթած խառնաղբը:

Ինչպես են ցանում ու խնամում շաղգամը.—կերի շաղգամի սերմերը նման են սովորական սեղանի շաղգամի սերմերին, բայց նրանցից մի քիչ մեծ են. աճում են ցանելուց 4-5 որ հետո. վորպեսզի սերմերը ժամանակին ուռչեն ու աճեն, պետք է հողի մեջ խոնավությունը լինի ավելի քիչ, քան այդ հարկավոր և ճակնդեղի և գագարի սերմերի աճման համար, այդ պատճառով շաղգամը ուշ ցանելիս (մայիսի վերջին, հունիսի սկզբին) տալիս է լավ ծիլեր և նրա արժատները աշնանն արդեն լցված են լինում: Նույնիսկ խորհուրդ չենք տալիս կանուխ ցանել : աղգամը, ահա թե ինչու:

Այս արմատապտուղը (վորպես խաչածաղիկներին պատկանող մի բույս) յենքակա յե զետելու նոյնու մի միջատի հարձակմանը. այս միջարը յերեան և գալիս մայիսին և ապրում է մինչև հունիս: Այս հանգամանքն ի նկատի ունենալով, ամենից լավն է շաղգամը ցանել հունիսի սկզբին, վորովհետեւ այդ գեպքում նրա ծիլերը գուրս կը գան այն ժամանակ, յերբ արդեն գետնալուն սկսում է գոչնչանալ և չի կարողանալ ուժեղ կերպով մնա-սել ծիլերին:

Գետնալուի դեմ կոմիլու համար հարկավոր ե:—

1) Խճամբավ քաղիան անել, վորովհետեւ լուերը սկզբում լինում են մոլախոտերի վրա, ապա այնտեղից անցնում են շաղգամի ծիլերի վրա, ուստի աերը մենք վոչնչացնում ենք մոլախոտերը, գրանով միաժամանակ



խանդարում ենք գետնալիի բազմանալուն, քանի դեռ շաղ-
զամի ծիլերը դուրս չեն յեկել:

2. Շաղգամի ցանքսի վրա ձիռ թրիք փոել, կրով:

3. Շաղգամների աւանքներում ցանել կանեմի, գո-
րովինետև գետնալուն փախչում ե կանեփի հոտից:

4. Ծիլեր սրսկել փարիզյան կանաչի լուծույթով,
վորի համար վերցնում են տմեն մի վեգրո ջրին Յ մսխալ
փարիզյան կանաչ և Յ մսխալ կիր: Փարիզյան կանաչը նա-
խորոք լուծում են ալքոհոլի (սպիրտի) մեջ: Շաղգամի ամեն
մի գետիատին ցանքսին գնում ե 8—10 ֆ. սերմ: Խորհուրդ
չենք տալիս շաղգամը շիթիլ անել և տնկել, վորոհետև նա
արժատ վատ ե բռնում և մեծ մասը կորչում եր:

Յեթե շաղգամը ցանում ենք շարքով, մեջշարքային
տարածություն պետք է թողնենք վոչ պակաս քան 10
վորշոկ, յերբեմը և մինչև 14 վերշոկ:

Սեհրակացնելիս առանձին բույսերի միջև պետք է
թողնել 6—8 վերշոկ տարածություն: Սկզբնական շրջա-
նում, քանի գեռ շաղգամը տերեներ չի տվել, անհրաժեշտ
է հաճախակի քաղնանել և չթողնել, վոր մոլախոտերը
խեղդեն: այդ ինսամբը կարևոր է, քանի գեռ շաղգամի ար-
ժատները չեն պնդացել և տերեները չեն զարգացել: հե-
տագայում, յերբ տերեները զարգանում են, նրանք այն-
քան շվար են անում իրենց շուրջը, վոր մոլախոտերը տ-
ձել չկարողանալով, իրենք իրենց վոչնչանում են:

Շաղգամը հաւանում է սեպտեմբերին:

Շաղգամի ամենամեծ պլուխները կշռում են մինչև 18-22
ֆ. սակայն մշակելիս չպետք է աշխատել անսպայման մեծ
քաշ ունեցող պլուխներ ստանալ, վորովինետև գրանք մեծ
մասամբ լինում են թոռոմած, քիչ հյութալից և մեջը դա-
տարկ:

Ամենից լավ է, յերբ շաղգամի պլուխը հարթ է և
լշում է միջին թվով 4—5 ֆ.:

Շաղգամի տեսակները.—Բոլոր տեսակի շաղգամնե-

Ո՞րց ամենից շատ բերք տվող ու պահելու հարմար դիմացկուն են Եստերզունդույան (տես նկ. 2), Երերզինյան



Նկ. 2 Շաղգամ Եստերզունդույան

(Նկ. 3) Բոլոտֆելտյան, և անզլիական հարթ տեսակները:

Անձնական դիմացությունների վրա հիմնված կարող ենք ասել, վոր հիշված տեսակներից ամենադիմացկունն ու վստահելին է Եստերզունդույան տեսակը: Սա ամենից շատ բերք և տալիս, ձմեռը շատ լավ և դիմանում, դատարկ գլուխներ քիչ և տալիս և չի հոտում, իսկ յերբ անկում ենք սերմացուի համար, տալիս և սերմերով առատ և ուժեղ ճյուղեր:

Գ Յ Ն Գ Ե Զ (բրյուկվա)

Այս արմատապտուզը թե իր արտաքին տեսքով

և թե գարզացման ձեռվ (ցանքով, հողի վերաբերեամբ ունեցած պահանջը, աճելը ևայլն) բոլորովին նման է շաղկամին (կլոր տեսակին): Ուստի ինչ վոր ասովեց շաղ-



Նկ. 3 Շաղկամ Ծրեղինան.

դամի մասին, վերաբերուժ և նաև գոնգեղին:

Հիշենք սրա տուանձնահատկություններից մի քանիսը —


1. Սրա արմատները մի քիչ ավելի պինդ են, քան շաղկամինը:

2. Սրա բերքը միջին թփով շաղկամից միքիչ ցածր է.

3. Սա ավելի լավ է պահպան ու դիմանում, քան շաղկամը, վորովինեաև տաքության աստիճանի տատանումները սրա վրա խիստ չեն ազդում:

Տեսակները. — Գոնգեղի ամենաշատ բերք ավազ և այդ պատճառով ամենաշատ տարածված տեսակն է համարվում:

Հաֆմանյան գեղին տեսակը (նկ. 4) (սպիտակն ավելի դառիւ է):



Նկ. 4 Գոնզեղ Հաֆմանի.

Գ Ա Զ Ա Ր

Գաղարի արմատները շատ խորն են գնում
Տաղի մեջ: Նրա սերմերն աճում են չափազանց դանդաղ
և ուռչելու համար պահանջում են շատ խոնավություն:
Ցերբեմն գաղարի ծիլերն յերկում են միայն ցանելուց 3
շաբաթ յետո:

Նրա տերենները շաղկամի ու ճակնդեղի տերենների
նման չեն. մեծանում, ուստի և իրենց շուրջը մեծ ստվեր
չեն գցում, այդ պատճառով նրա շուրջը աճած մոլախո-
տերը այնքան են ուժեղանում, վոր կարող են խեղդել
մասնիւթեած ծիլերին:

Հողը յեվ պարաւտացումը. — Լողար, կարճ և ճյուղավորված գագարը հողի վերաբերմամբ ավելի պահանջկուսե, քան շաղգամը: Նա կարող է լավ բերք տալ թեթև, հարուստ հողերի վրա, վորտեղ յենթահողը խորհն է բնկած կամ՝ շատ պինդ չե: Ծանր հողերի վրա, վորտեղ յենթահողը կավ է, գագարը գուրս է զալիս լղար, կարճ և ճյուղավորված:

Գագարի մւսկուրյան համար ամենալավ հողը համստիվամ է շատ փտահող պարունակող ավագախառն հողը:

Յեթե ուզում ենք ցանել գագար, պետք է աշխատենք, հողը փխրունացնել վորքան կարելի յե խորք: Յեթե հողը խորացնող գործիք կա, անհրաժեշտ է գութանից յետո գործի դնել այս: Գոմազը պետք է մացնել հողի մեջ աշխանը և վարել:

Գագարի ցանեսն ու խնամմը. — Վորովհետեւ գագարին սերմերը ուշ են ուռչում, դրա համար պիտի ցանել կանուխ գարնանը կամ ուշ աշխանը:

Գարնանը ցանում են հենց վոր ձյունը հալչի և հնարավոր լինի դուրս գալ դաշտ: Նախքան ցանելը լավ կը լինի սերմերը թրջել և այդպես թաց պահել 2-3 որ: Յերբեմն գագարի սերմերը ավագի հետ են խառնում ու արորում: Արորելու ժամանակ ավագի հատիկներից սերմերը մի քիչ քերծ վում են և այդ պատճառով աճում են ավելի արագ ու համահավասար:

Աշխան ցանքը կատարում են վոչ ուշ, քան ցրտերն ընկնելուց մի շաբաթ առաջ, աշխատում են ցանել այն հաշվի, վոր մինչև ձյուն գալը սերմերը ծիլ տան: Զմեռը ձյունի տակ գագտրի սերմերը չեն փշանա, ինկ գարնանը հենց վոր ձյունը վերանա, սերմն խկույն կոկսին ուռչելու այս ձեռվ նրանց աճելու և զարգանալու ժամանակից վոչ մի որ չի կորչի:

Մի գեսեատին հողի վրա ցանում են 10-15 ֆ. մաքրած գագարի սերմ:

Գաղարը ցանելիս մեջալքային տարածությունները իրարից 6-8 վերշոկ հեռու յեն շինում։ Նոսրացնելու ժամանակ առանձին բույսերի արանքում թուղնում են 4-6 վերշոկ տարածություն։

Ինչպես վերևում ասացինք, գաղարի ծիլերն յերեսում են ցանելուց 2-3 շաբաթ յետո. իսկ մինչ այդ մոլախոտերը բավականի ուժեղացած են լինում և կարող են խեղդել նոր յերեացող ջահել ծիլերը։

Այդ պատճառով պետք ե շտապել գաղարը շուտ քաղնանել։ Վորովհետև գաղարն ինքը չի կարողանում հաջողությամբ կռվել մոլախոտերի գեմ, ուստի մինք պետք ենք ամբողջ ամձան ընթացքում քաղնանենք։

Գաղարի արմատաները ուշ են սկսում լցվել, այն ե ոգոստոսին և սեպտեմբերին. այդ պատճառով գաղարը պետք ե հայաքել սեպտեմբերի վերջից վոչ շուտ, իսկ յեթե լով աշուն ե, հոկտեմբերին։ Լավ մշակած հոգում՝ գաղարի արմատների յերկարությունը հասնում է $\frac{3}{4}$ արշինի, իսկ ամեն մի հատի քաշը 3 ֆունտի։

Գաղարի ամենատարածվածը տեսակներն են՝ սպիտակ կանաչազլուխը (նկ. 5), և սովորական կարմիրը։

ՃԱԿՆԴԵՂ. (բազուկ, — տակ)

Այս արմատապտուղը ամենից շատ պահանջկում ե թե հողի, պարարտացման և թե կլիմայի վերաբերմամբ։

Ճակնդեղը զարգանալու հսկմար պահանջում ե սիելի շատ տաքություն և սննդարար նյութերով հարուստ հող, քանի մյուս արմատապտուղները, նրանցից ագելի շատ կարիք ե զգում փիրուն, փտահաղավ հարուստ և գումադրով պարարտացրած հողի։

Հողը յեվ պարստացումը. Ճակնդեղն ամենից լավ ե աճում թեթև ավագախառն հողերում. լայս ե աճում ավազոս յեվ շուրջ պնդացող հողերում։

Ճակնդեղի հողն անհրաժեշտ է սլարաբացնել գոմաղ-
բով կամ խառնաղբով:

Ճակնդեղը, ինչպես և շաղամը, լավ են աճում լավ
մշակված արփաջների վրա:



Նկ. 5 Գազար սպիտակ.

Յանքար.—Ճակնդեղը միակ արմատապտուղն է, վորը
բացի սերմերով ցանելուց, կարելի յե նաև հաջողությամբ
շիթիլ անել:

Ճակնդեղի, ինչպես և կաղամբի շիթիլներ ստանա-
չու համար կանուխ գարնանը սերմերը ցոնում են հատուկ
երմանոցներում (պարնիկներում): Յերբ այդտեղ սերմե-
րից ստացված ծիլերը համառում են $1\text{-}1\frac{1}{2}$ վերշոկ բար-
ձրություն, հանում են ու տանում անկում հողի մեջուղ-
ղակի ձեռքերով: Շիթիլները տնկելիս պետք է ուշադրու-
թյուն դարձնել, վոր արմատները չծովեն, այլ ուղիղ մըտ-
նեն հողի մեջ, թե չե մեծանալիս կը ստացվեն ծուռ ար-
մատներ:

Ճակնդեղը պետք է ցանել թմբերի վրա, վորպեսզի
ավելի լավ տաքանա արեից:

Ճակնդեղի Տեսակները.—Ճակնդեղի սերմերը պետք
է ցանել կանուխ գարնանը, վորովհետև նա ել, ինչպես և
դազարը, աճելու համար պահանջում է շատ խոնավու-
թյուն:

Ճակնդեղը չի կարելի ցանել աշնանը, վորովհետև
սերմերը ձմեռը կը մրսեն և կը կորցնեն ծլման ունակու-
թյունը:

Ճակնդեղի միջարբային տարածությունը 8-10 վերշ.
են անում. Նոսրացնելիս բույսերի արանքը թողնում են
6-8 վերշ. տարածություն: Մի գեսատին հողի վրա ցա-
նում են 30-40 Փ. սերմ:

Ճակնդեղնել, շաղգամի նման, տերեֆսերով իր բոլորքը
մեծ սավեր և ձգում և դրանով հաջողությամբ կարողա-
նում կուել մոլախոտերի գեմ: Այդ պատճառով ճակնդե-
ղի քաղնան արփում և սկզբում, քանի գեռ բույսերը չեն
ամրացել և տերեները չեն զարգացել: Ճակնդեղի արմատ-
ները լցվում են շաղգամի չափ և կարելի յե հավաքել
սեպտեմբերի մեջ կամ վերջը:

Տեսակները.—Շուկայում ծախում են շատ տեսակի
ճակնդեղներ: Ամենատարածվածներն են Եկենդորֆյան
(նկ. 6) (դեղին և կարմիր) և Ոբերնդորֆյան (նկ. 7)
նույնպես գեղին և կարմիր տեսակները:

Սրանցից առաջնը տալիս և ավելի խոշոր արմատ-
ներ, վորոնք յերեսից վեր են բարձրանում, ուստի և ան-
հրաժեշտ են նրանց բուկը լցնել: Յերկրորդ տեսակը ու-
նի ավելի կլոր ձեվ, եկկենդորֆյանից ավելի մանր և և
տալիս և տվելի պակաս բերք:

Ավելի պակաս բերք և տալիս, բայց բիչ պահանջկոտ
և «Մամուռ» տեսակի կարմիր ճակնդեղը:

Բացի վերոհիշյալ տեսակներից, դյուղացու համար

շատ կարեվոր և կիսաքաղցր ձակնդեղը (սպիտակ—վար-



Նկ. 6 Եկեղեցության.

գագույն) (Նկ. 8): Այս ահսակը հետաքրքիր և նրանով վոր պարունակում է ավելի շատ սննդարար մասեր, քան մյուսները:

Ճակնդեղը շատ լավ կեր և ամեն մի տափարատեր պետք է աշխատի այնքան ցանի, վոր ամբողջ ձմեռը լինի կերակրի իր կաթնատու կովերին և ընդհանրապես իր տափարին:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՎԱՔՈՒՄ ՈՒ ՊԱՀՈՒՄ ԱՐՄԱՏԱ-
ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ինչպես վերեռւմ ասացինք, արժատապտուղները
հանում են տարբեր ժամանակներում, գոնգեղն ու ձա-
կնդեղը սեպտեմբերի սկզբին, իսկ գաղարը սեպտեմբերի
վերջին և նույնիսկ հոկտեմբերի սկզբին:



Նկ. 7 ձակնդեղ ոքերնպուֆչան.

Բերքը հավաքնում ժամանակ արժատապտուղները հո-
դի միջից քաշում հանում են ուղղակի ձեռքերով կամ
բաներով, ապա թափ են տալիս վրան կպած հողը, կտրում
են տերեփները, իսկ արժատները հավաքում են հենց
գաշտում փարթիկ կույտերով դարսում չորացնելու համար:
Պետք ե աշխատել տյնպես կտրել տերեփները, վոր վաչ
կակուզ մասից պոկզի և վոչ ել շատ կանաչ մաս մնա
արժատի վրա. յերկու գեպքում ել արժատները շուտ են
սկսում փառել: Ամենից լավ ե տերեփները կտրել արժատից

^{1/2}-1 վերշոկ վերկից: Տերեները կերցնում են տավարին աշնանը հենց կանաչ դրությամբ: Իսկ յեթե տերերը շատ է և կերցնելով չի վերջանա, այն ժամանակ նրանից պատրաստում են «սիլոս»¹⁾: Գլխավորապես ձակնդեղի տերեղներն են կերցնում տավարին:

Յերբ արմասները չորացած են և հողը նրանց վրայից թափաված — մաքրված ե, հավաքում — տանում են նկրու:



Նկ. 8 ձակնդեղ կիսամաղցր.

¹⁾ Հոր են փորում, տերեկները շերտերով մեջը դարսում, հողով ծածկում և տրորում. Կանաչ տերեկները այդպես մնում են: Աշնանը կամ ձմեռը այդ տերեկները տալիս են տավարին, վորը մեծ ախորժակավ ուտում ե. Այս ձեզով շատ բույսեր են պահում և այսպես պահած կերը կոչվում է սիլոս: Ծան. խմբ.

Արմատապտուղները կարելի յե պահել այնպես, ինչպես կարտոֆիլն են պահում. այսինքն նրանց ել կարելի յե հավաքել – լցնել չոր նկուղները: Վորապեսզի նրանք չփառն, նկուղը պետք ե լինի չոր և ունենա միատեսակ տաքություն. յերբ նկուղում հաճախակի ցուրտ ու տաք ե լինում, արմատապտուղները շատ չուտ են սկսում փշանալ:

Արմատապտուղները կարելի յե պահել նաև վոչ-խոր փոսերի մեջ: Այդ նպատակի համար շինված փոսերի յերկու կողքերը լինում են թեք կտուրի ձեռվ, վորի վրա լցնում են ծղնուած և ծածկում հողով: Այդպիսի փոսեր հեց ինքներդ կարող եք շինել. նրանք եժան են նստում, արմատապտուղները լավ են պահում և հարմար ե ձմեռը այնտեղից հանել գործածելու համար:

Բացի այս ձերբից, արմատապտուղները կարելի յե պահել նաև զեանի յերեսին: Դրա համար մի բարձր տեղում փորում են տաշտի նման մի փոս $\frac{1}{4}$ արշինից վոչ խոր, փոսի լայնությունը պետք ե լինի 1 սաժեն, իսկ յերկարությունը պետք ե համապատասխանի պահվելիք արմատապտուղի քանակին: Փոսի մեջտեղը կանգնեցում են ող մաքրող խողովակ, ապա ամբողջ փոսը կտուրի նման լցնում – ծածկում են արմատապտուղներով, վրան փռում են ծղնուած և հող 2-3 վերչ. հաստությամբ:

Յերբ սկսում են խիստ ցրտերը, փոսերի վրա ածում են գոմաղբ, վորապեսզի արմատապտուղները չմրսեն: Այդ ձեռվ պահում են միայն մեծ քանակությամբ արմատապտուղները: Յեթե մեծ քանակությամբ արմատապտուղ են ցանում, այդ գեպքում շինում են հատուկ խրճիթներ, վրտեղ և պահում են արմատապտուղները ամբողջ ձմռվա ընթացքում: Այդպիսի խրճիթներում՝ կարելի յե պահել նաև այն արմատապտուղները, վոր նշանակված են հետեւյալ տարին ցանելու և սերմ ստանալու համար: Արմատապտուղները միատեսակ չեն դիմանում. մի քանի

առեսակներ ավելի շուտ են փչանում, մյուսներն ավելի ուշ:

Ամենից շուտ փչանում ե ճակնդեղը, յետո գալիս ե շաղպամը, գոնգեղը և վերջապես զագարը, վորը համար-վում ե ամենադիմացկունը:

Սովորաբար, յերբ տնտեսության մեջ մի քանի առեսակ արժատապառուղ են ցանում, ձմրանը նրանց գործածում են իրենց դիմացկության կարգով - սկզբում կերց-նում են տավարին ճակնդեղը, ապա շաղպամը, գոնգեղը և վերջը զագարը:

ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԵՐՑՆՈՒՄ ՏԱՎԱՐԻՆ

Ինչպես են կերցնում արմատները. — Յերբ ուզում ենք տավարին կերակրել արժատապառուղներով, պետք է հիշենք, վոր յեթե տավարին կամաց կամաց չսովորեցնենք այդ նոր կերին, նրանք ուժեղ փորլույժ կը ստանան (մասնավոր հորթերը):

Սյու պատճառով խորհուրդ ենք տալիս հասակ տուած տավարին սկզբում տալ որական 10 ֆ. արժատապառուղ, իսկ հորթին 4-5 ֆ.

Արժատապառուղները տավարին տալուց առաջ պետք է լվանալ ջրով:

Արժատապառներն առանց մանրացնելու կարելի յե կերպ ցնել միայն հանդիսատ տավարին: Մի քանիսու գանում են, վոր յերբ կենդանին կրծում ե մի ամբողջ արժատ, նրա թուքը առատությամբ և արտադրվում և կերը մարսվում ե ավելի լավ: Այն կենդանիներին, վորոնք ագանաբար կերի վրա են ընկնում, անհրաժեշտ ե արժատապառուղ տալ մանրացներ գրաւթյամբ: Արժատապառուղները մանրացնելու համար գործադրում են գանակներ, կացիներ և կամ հատուկ մանրացնող գործիքներ:

Արմատապառուղների հետ տավարին անհրաժեշտ ե
առաջ նայել կոպիտ կեր—խոտ և գարման:

Յեթե տավարին տալիս եք շաղգամ, ուժեղ կերերից
պետք ե տալ քուսպ, բայց վոչ թեփ: Շաղգամն ու թեփը
միասին ուտելիս հաճախ տավարի ստամոքսը խանդարվում է:

Դանիայում և Շվեցիայում սովորություն կա արմա-
տապառուղները տավարին կերակրել առանց խոտի: Այս-
տեղ ամեն մի զլուխ տավարին որական տալիս են մինչ
 $1\frac{1}{2}$ փութ արմատապառղ, 15-18 ֆ, դարման և սոսա-
վորապես 10 ֆ. ուժեղ կեր, այդ այն դեսպում, յեթե ո-
րական կերը հավասար է 45-48 ֆուտի:

Տավարին նորմայով կերակրելիս պետք է իմանալ, վոր
1 կերի միավոր են կազմում մոտավորապես 12 ֆ. շող-
դամն ու գոնզեղը, 9 ֆ. ճակնդեղը և 8 ֆ. զաղարը:

Ընդհանրապես գանիացիները փորձերով պարզել են,
վոր արմատապառուղի 1 ֆ. չոր նյութը սննդարարությամբ
հավասար է 1 ֆ. հացահատիկին, այսինքն 1 կերի միավորի:¹⁾

Իբրև որինակ բերենք տավարին արմատապառուղնե-
րով կերակրելու հետեւանքները, վոր ստացվել են Յարոս-
լավ նահանգի Վերետեհիսկի կոնարությունության մեջ:

Այստեղ մինչեվ կոնտրութիւնության կազմվելը մի կո-
պին արվում եր 40 ֆ. խոտ և 4 ֆ. կտավատի քուսպ, և
ստացվում եր 18 ֆ. կաթ: Այսպիսով 1 ֆ. կաթը դյու-
դացուն նստում եր 80 կ. (1 ֆ. խոտը 30 կ. և քուսպը
80 կ.), իսկ յերբ նույն կովին տալիս են 17 ֆ. խոտ, 10
ֆ. դարման (հաշվելով 1 փութը 10 կ.) 4 ֆ. քուսպ և
48 ֆ. շաղգամ (փութը 5 կոպ.). այն ժամանակ կաթը
դառնում է 24 ֆ. և 1 փութը նստում է 53 կոպ:

Շատերը հարցնում են, թե ինչո՞ւ տավարին արմա-
տապառուղներով կերակրելն ավելի լավ է, քան կարտոֆի-
լով: Պատասխանը պարզ է. 1) կարտոֆիլը ավելի
թանգ կեր է. նա 5-6 անգամ ավելի թանգ արժե, քան
շաղգամը, մինչդեռ սննդարարությամբ միայն 2 անգամ
քարձը ե նրանից. 2) կարտոֆիլը շաղացնում է տավարին,

¹⁾) Կերակրելու մասին կարդա «Կաթնառու կովի կերակրելն ու
խնամելը» գրքույկը, վոր հրատարակել է Ագիտ. քաժինը:

ուստի գլխավորապես պետք է նրանով կերակրել մսացու տավարին. իսկ արմատապառւղները «կաթնաբեր» կերեր են,

Ինչպես են կերցնում տավարին արմատապտուղների վերեվները. — Ինչպես վերելում ասացինք, արմատապառւղները բացի արմատներից տալիս են շատ ցողուն ու տերեփներ, դեսյատինից 800-1200 գութ: Տերեփները նույնպես լավ կեր են. գործածում են թե թարմ գրությամբ և թե պահում են ձմրանը: Տավարին պետք է կամաց-կամաց սովորացնել տերեփներին, սկզբում պետք է տալ 10-15 գ. ամեն օր գլխին և աստիճանաբար հասցնել մինչեւ 1 գութ որական:


ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ, ՎՐՈ ԶԻ ԿԱՐԵԼԻ ՏՅՎԱՐԻՆ.
ՏԱԼ ՓԵԱԾ ԿԱՄ ՄԻՍՍԱԾ ՏԵՐԵՎ:

Տավարին ամենից շատ ախորժակով է ուտում ձակին-գեղի և գազարի տերեփները: Այս կերը բարձրացնում է կոփի կաթնատվությունը, յուղին տալիս է դուրեկան հոտ և գեղին գույն: Շաղգամի տերեփը ուտվում է պակաս ախորժակով, վորովհետեւ նա կոշտ ու կոպիտ է: Ոգտակար և տերեփներ տալ նայել ուրիշ կենդանիների, բայց քիչ քանակությամբ (5-10 գ.): Կթի կովերին լավ կը լինի չտալ շաղգամի թարմ տերեւ, վորովհետեւ նրա հոտը կարող է անցնել կաթին:

Սովորաբար գրանով կերակրում են ձիերին, վոշխարհներին և խողերին:

Սիլոս պատրաստած կերը տալիս են միայն կթան յեվ բանվոր տավարներին: Զահել ու ծանրած տավարին լավ կը լինի չտալ սիլոս, վորովհետեւ կարող է փորլույծ առաջնել և ծանրած կովը կարող է հորթատել:

Յեթե սիլոսը վատ և պատրաստված, նա հոտում է ու արձակում անդուրեկան հոտ տավարին այդպիսիք կեր բոլորովին շին կարելի տալ:



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ Ի. ՅԵՐԻՑՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ «ՄԱԶԿԱԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ 7ԵՏԵՎՅԱԼ ԳՐՔՈՒԿ-ՆԵՐԸ

1. Խ. Յերիցյան—ինչպիսի սերմացու պիտի ցանկը (սպառված)
2. Մ. Թումանյան—Բամբակի և կաղամբի վնասատուները,—
Գինն և 12 կոպ.
3. Ա. Ա. Բոգդանով—Բնուանի կենդանիների քոսը.—
Գինն և 12 կոպ.
4. Գ. Գրձելյան—Բամբակի չոռ հիվանդությունը.—
Գինն և 12 կոպ.
5. Պ. Ե. Սոկովնիկ—Ի՞նչպես պետք է կավել չօրության դեմ
անջրդի հողերում—Գինն և 12 կոպ.
6. Պող. Պ. Կոստիկյան—Ի՞նչ կա հողի մեջ և ինչպիսի հողեր
են լինում.—Գինն և 10 կոպ.
7. Իս. Տեր-Շերտովյան.—Խնձորենու վնասատուները և նրանց
գեր կավելու միջոցները.—Գինն և 12 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0835565

26314 - 50

2693

249

Yukon

© A M A G O R

ԳԻՆԵ Ե 15 ԿՈՊ.

